Կարգապահական գործ թիվ 17061

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2017թվականի նոյեմբերի 30-ի թիվ 177-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/105-Ա

ՓԱՍՏԱԲԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը **(այսուհետ նաև՝ Խորհուրդ)**, նիստը նախագահող՝ Սեդրակ Ասատրյանի, Խորհրդի անդամներ՝ Հրանտ Անանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Կարեն Մեժլումյանի,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

քննության առնելով փաստաբան Հարություն Բաղդասարյանին (արտոնագիր՝ 707) (**այսուհետ նաև՝ Պատասխանող**) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

04.07.2017թ. Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում մուտքագրվել է Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի **(այսուհետ նաև՝ Դատարան)** դատավոր Ա.Գաբրիելյանի՝ «Դատական սանկցիա կիրառելու մասին» 19.07.2017թ. որոշումը **(այսուհետ նաև՝ Որոշում**), որում նշվել է, որ թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 19.07.2017 թվականի դատական նիստի ընթացքում պաշտպան Հարություն Բաղդասարյանը դատարանի նկատմամբ դրսևորել է անհարգալից վերաբերմունք, որը պայմանավորված է եղել նրանով, որ վերջինս առանց նախագահողի թույլտվության, բարձր տոնայնությամբ կատարել է անզուսպ հայտարարություններ, բանավեճի մեջ մտել նախագահող դատավորի հետ, որի կապակցությամբ Դատարանի կողմից նախազգուշացվել է, սակայն անտեսելով Դատարանի օրինական պահանջը, պաշտպանը շարունակել է դրսևորել նույնանման վարքագիծ, այդպես շարունակելով անհարկի խոչընդոտել, խաթարել դատական նիստի բնականոն ընթացքը:

2. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>**

Պալատի նախագահի 01.08.2017թ. թիվ 219-Ա/ԿԳ-17061 որոշման հիման վրա փաստաբան Հարություն Բաղդասարյանի նկատմամբ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ նաև՝ Կանոնագիրք**) 4.1

կետի պահանջների խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

04.08.2017 թվականին կարգապահական գործը հանձնվել է նախապատրաստող փաստաբան Ստեփան Ոսկանյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. <u>Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.</u>

<u>3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.</u>

Կարգապահական գործի քննությանը Դիմողը չի մասնակցել՝ չնայած դրա ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին և այլ դիրքորոշում, քան Որոշմամբ արտահայտվածն է, չի ներկայացրել:

<u>3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

05.09.2017 թվականին Պատասխանողի կողմից Պալատի նախագահին հասցեագրված գրությամբ իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի կապակցությամբ վերջինս հայտնել է, որ իր գործողությունները բխել են իր պաշտպանյալ(ներ)ի շահերից և ուղղված են եղել դատարանի անօրինական գործողությունների դեմ:

Պատասխանողը բացատրություն չի ներկայացրել և միջնորդել է դատարանից պահանջել թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 19.07.2017թ. կայացված դատական նիստի արձանագրության էլեկտրոնային կրիչը:

Կարգապահական գործով հրավիրված նիստին Պատասխանողը չի ներկայացել՝ չնայած դրա ժամանակի և վայրի մասին պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին:

3.3. <u>Վկաների ցուցմունքները</u>.

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.</u>

Նախապատրաստողը կազմել է եզրակացություն 28.09.2017թ.:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Պատասխանողն առարկություն չի ներկայացրել:

Կարգապահական գործը Խորհրդին է հանձնվել 28.09.2017թ.:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 30.11.2017 թվականին ժամը 19:30-ին՝ Պալատի վարչական շենքում՝ ք.Երևան, Զաքիյան 7-2:

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման կարգի» (**այսուհետ՝ Կարգ**) 22-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Խորհուրդն այլ եզրահանգման է*

գալիս:

Խորհուրդն ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, **հաստատված է համարում հետևյալ փաստերը.**

1. Թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 19.07.2017 թվականի դատական նիստի ընթացքում պաշտպան Հարություն Բաղդասարյանի և դատավորի միջև տեղի է ունեցել հետևյալ երկխոսությունը.

«Դատարան - Խնդրում եմ պահպանեք կարգ ու կանոն: Պարոն Հայրապետյան, ես կիրառում եմ Ձեր նկատմամբ դատական սանկցիա՝ նախազգուշացում: Եթե երկրորդ անգամ առանց իմ թույլտվության տեղից որևէ բառ կխոսեք, այլ սանկցիա կկիրառվի Ձեր նկատմամբ, նստեք: Պետք է թողնեք, որպեսզի կարողանանք իրականացնել դատաքննություն: Դուք պարտավոր եք ենթարկվել դատարանի կարգ ու կանոնին: Պարոն Գևորգյան, նույնը Ձեզ եմ դիմում: Ես խնդրում եմ չխանգարել դատական նիստը: Ձեր նկատմամբ նույնպես դատարանը սանկցիա է կիրառում՝ նախազգուշացում:

Պաշտպան Բաղդասարյան - Եթե հիմա բոլոր փաստաբաններով կանգնենք, ի՞նչ եք անելու:

Դատարան - Կարող եք կանգնել, բայց չխոսել, եղա՞վ: Պարոն Բաղդասարյան, Ձեզ նույնպես դատարանը կիրառում է դատական սանկցիա նախագահող դատավորի օրինական կարգադրությունը չկատարելու համար: Դուք բոլորդ պարտավոր եք ենթարկվել դատավորի կարգադրություններին: Մի շարունակեք:

Պաշտպան Բաղդասարյան - Դուք եք խախտում, հարգելի դատարան: Վերջապես փորձեք հասկանալ՝ ի՞նչ ենք ուզում ասել:

Դատարան - Ուրեմն, ես նորից եմ կրկնում, չշարունակեք, թե չէ Ձեր նկատմամբ նույնպես կկիրառվի դատական սանկցիա:

Պաշտպան Բաղդասարյան - Լավ, եկեք Դուք մեր բոլորի նկատմամբ կիրառում եք, խնդիր չկա, սանկցիա կիրառեք, մենք սաղս սրտեղից դուրս ենք գալիս, իմաստը ո՞րն ա: Ի՞նչ եք ուզում մեզնից:

Դատարան - Իմաստը նրանում է կայանում, որ դուք բոլորդ պարտավոր եք ենթարկվել դատավորի կարգադրություններին, որպեսզի մենք կարողանանք իրականացնել դատաքննություն: Հինգ դատական նիստ ա, որևէ բան չենք արել, որովհետև թույլ չեք տալիս: Ընկեր Բաղդասարյան, Ձեզ նախազգուշացնելուց հետո, հաշվի առնելով, որ Դուք կրկին անգամ խոչընդոտում եք դատական նիստի բնականոն ընթացքը, անհարգալից վերաբերմունք եք ցույց տալիս դատարանի նկատմամբ, հետևաբար, դատարանը հեռանում է խորհրդակցական սենյակ՝ փաստաբանի նկատմամբ համապատասխան որոշում կայացնելու»:

Նշված հանգամանքը հաստատվում է դատական սանկցիա կիրառելու մասին որոշմամբ, դատական նիստի ձայնագրությամբ:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Պատասխանող Հարություն Բաղդասարյանը փաստաբան է հանդիսանում 19.10.2007 թվականից, և 2007-2017 թվականներն ընկած ժամանակահատվածում վերջինիս նկատմամբ 5 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ (1 ավարտված և 4

ընթացիկ վարույթ): Խորհրդի 25.02.2010 թվականի թիվ 5/3 որոշմամբ փաստաբան Հարություն Բաղդասարյանի նկատմամբ հարուցված կարգապահական գործի վարույթը կարճվել է:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, գտնում է, որ փաստաբան Հարություն Բաղդասարյանը թույլ է տվել Կանոնագրքի 4.1 կետի խախտում հետևյալ պատճառաբանությամբ:

Փաստաբանության մասին ՀՀ օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ *փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի կողմից կիրառվող վարվելակերպի կանոններին, այդ թվում հարգանքով վերաբերվել դատավորին և դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ ճշգրիտ հարգանք և համակրանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:*

Նշված կանոնը նաև վկայակոչող (բլանկետային) է, քանի որ հղում է կատարում փաստաբանի և դատարանի փոխհարաբերությունները կարգավորող այլ իրավական ակտին, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ *պաշտպանը պարտավոր է ենթարկվել (...) դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին, դատական նիստում պահպանել կարգուկանոն:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *նախագահողի կարգադրությունները պարտադիր են դատական քննությանը մասնակցող կամ դատական նիստին ներկա գտնվող յուրաքանչյուր անձի համար:*

Նույն օրենսգրքի 314.1-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը սահմանում է.

«Դատարան ներկայանալուց չարամտորեն խուսափելու կամ դատավարական իրավունքներից անբարեխղճորեն օգտվելու կամ դատավարական պարտականություններն անհարգելի չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու, դատավորի օրինական կարգադրությունները չկատարելու, դատական նիստի բնականոն ընթացքը խոչընդոտելու կամ նիստի կարգը խախտող այլ գործողություն կատարելու միջոցով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու դեպքում դատարանն իրավունք ունի քրեական դատավարությանը մասնակցող անձանց և դատական նիստին ներկա գտնվող այլ անձանց նկատմամբ կիրառելու հետևյալ սանկցիաները .... 4) պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով համապատասխանաբար գլխավոր դատախազին կամ Փաստաբանական պալատ դիմելը»:

Վերոգրյալի համատեքստում Պալատի խորհուրդը հարկ է համարում պատասխանել հետևյալ հարցադրմանը.

- Արդյո՞ք Պատասխանողի կողմից թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 19.07.2017 թվականի դատական նիստի ընթացքում դրսևորած վարքածով վերջինս չի ենթարկվել դատական նիստը նախագահողի օրինական կարգադրություններին, դատական նիստում չի պահպանել կարգուկանոն դրանով իսկ՝ անհարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի նկատմամբ:

Խորհուրդը հիշեցնում է, որ փաստաբանը, ունենալով առանձնահատուկ հասարակական կարգավիճակ, ունի իրավական և բարոյական պարտականությունների լայն շրջանակ: Փաստաբանը՝ որպես իրավապաշտպան գործունեություն իրականացնող անձ, իրավունք ունի և պարտավոր է բարեխղճորեն պաշտպանել իր վստահորդների իրավունքներն ու օրինական շահերը՝ օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով: Միևնույն ժամանակ փաստաբանը նպաստում է արդարադատության իրականացմանը և այդ առաքելության շրջանակներում կոչված է ծառայել արդարադատության շահերին: Հետևաբար փաստաբանի պարտականությունների հասցեատերերը ոչ միայն վստահորդներն են, այլև արդարադատության գործառույթ իրականացնող մարմինները՝ դատարանները: Սույն դատողությունն արտացոլված է նաև Կանոնագրքի դրույթներում: Մասնավորապես, Կանոնագրքի 1.1 ենթակետի համաձայն՝ *փաստաբանը կոչված է ծառայել արդարադատության շահերին, ինչպես նաև այն իրավունքներին ու արտոնություններին, որոնք նրան վստահել են պաշտպանելու իր վստահորդի շահերը:*

Հաշվի առնելով փաստաբանի գործառույթների և դրանցից բխող պարտականությունների բազմազան բնույթը՝ ՀՀ օրենսդրությամբ և Կանոնագրքով հստակորեն սահմանված են փաստաբանի այն հիմնական պարտականությունները, որոնք նա ունի ինչպես վստահորդի, այնպես էլ դատարանի հետ հարաբերություններում: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Կանոնագրի 4.1 ենթակետին, որը, լինելով բլանկետային իրավադրույթ, հղում է կատարում դատարաններում գործող վարվելակերպի կանոններին: Վերջիններս սույն գործի պարագայում նախատեսված են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում և, մասնավորապես, դրա վերոնշյալ դրույթներում:

Փաստաբանի վարքագիծը, որը խախտում է Կանոնագրքի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նշված նորմերը, կասկածի տակ է դնում սեփական պարտականությունների նկատմամբ փաստաբանի ընդհանուր բարեխղճությունը, քանի որ փաստաբանի պարտականությունները չեն սահմանափակվում միայն իր վստահորդի հանձնարարության կատարմամբ, այլ ընդգրկում են տարաբնույթ այլ պարտականություններ, այդ թվում՝ բարեխիղճ վերաբերմունքի դրսևորումը դատարանում գործող վարվելակերպի կանոններին:

Ավելին՝ Եվրոպայի փաստաբանների միությունների և իրավական համայնքների խորհրդի (CCBE-ի) կողմից հաստատված եվրոպական իրավական մասնագիտության հիմնական սկզբունքների վերաբերյալ մեկնաբանությունների «դ» կետի համաձայն՝ *փաստաբանը, որպեսզի հարգվի իր վստահորդների, երրորդ անձանց, դատարանների և պետության կողմից, պարտավոր է արժանանալ այդ հարգանքին: Դա հնարավոր է անդամագրվելով հեղինակային մասնագիտությանը. հետևաբար, փաստաբանը չպետք է անի այն ամենը, ինչը կարող է հեղինակազրկել ինքն իրեն կամ առհասարակ փաստաբանությանը, որպես մասնագիտություն, կամ թուլացնել տվյալ մասնագիտության նկատմամբ հասարակության վստահությունը: Դա չի նշանակում, որ փաստաբանը պետք*

է լինի կատարյալ անձնավորություն, բայց դա նշանակում է, որ նա չպետք է ցուցաբերի ոչ հարիր վարքագիծ, թե փաստաբանություն, թե այլ տեսակի գործունեություն իրականացնելիս, թե նույնիսկ մասնավոր կյանքում, որով հնարավոր է որ վարկաբեկվի տվյալ մասնագիտությունը:

Սույն դրույթը վկայում է այն մասին, որ կշեռքի մի նժարին դրված է փաստաբանի արտահայտվելու ազատությունը, իսկ մյուս նժարի վրա՝ փաստաբանության, որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտի, որին Սահմանադրությամբ վերապահվել է պետության կողմից երաշխավորված անձի իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի ապահովումը, հեղինակությունը, մի կառույցի հեղինակությունը, որին անդամագրված են արդարադատության իրականացման գործընթացում հասարակության և դատարանի միջև միջնորդ հանդիսացող փաստաբանները, կառույց, որի բարձր հեղինակությունից է նաև կախված յուրաքանչյուր փաստաբանի հեղինակությունը պետական մարմինների, դատարանների և այլ անձանց հետ հարաբերվելիս: Այս տեսանկյունից, բնականաբար, արդարացված և հավասարակշռված է փաստաբանի արտահայտվելու ազատության սահմանափակումը, որն ուղղված է մյուս բոլոր փաստաբանների և առհասարակ փաստաբանության հեղինակության բարձրացմանը: Նման սահմանափակումն անհրաժեշտ է հասարակության (այդ թվում՝ փաստաբանական համայնքի) համար:

Կանոնագրքի 4.1 կետի և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի վերոգրյալ դրույթների համադրված վերլուծությամբ փաստվում է, որ դատարանում գործող վարվելակերպի կանոնները, տվյալ դեպքում քրեական գործերով ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում գործող դատավարական կարգը, ներառում են դատավարության մասնակիցների և այդ թվում փաստաբանների կողմից դատավորի նկատմամբ հարգալից վերաբերմունքի դրսևորում:

Դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքը հանդիսանում է դատավարության բոլոր կողմերի, այդ թվում պաշտպանների հիմնարար պարտականություններից մեկը: Ընդ որում, փաստաբաններն այս հարցում ունեն առանձնահատուկ հանձնառություն, քանի որ կոչված են նպաստել արդարադատության իրականացմանը և հանդիսանում են միջնորդ հասարակության և դատական իշխանության միջև:

Դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունքը չի նշանակում փաստաբանի կողմից իր վստահորդների շահերը պաշտպանելիս դատարանի հետ շփումներում կաշկանդվածություն կամ դատարանի համակրանքը շահելու գործողությունների իրականացում՝ ի վնաս իր վստահորդի շահերի: Կանոնագրքի 4.1 կետի երկրորդ նախադասությամբ փաստվում է, որ դատարանում գործող վարվելակերպի կանոններին ենթարկվելու փաստաբանի պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի կամ արբիտրի գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը կամ ցանկացած հետևանքները, որոնք կպատահեն իր կամ ցանկացած այլ անձի հետ:

Միևնույն ժամանակ վստահորդի շահերի պաշտպանությունը չի կարող իրականացվել ՀՀ օրենսդրությանն ու Կանոնագրքին հակասող կամ դրանք խախտող եղանակներով և միջոցներով, ինչը ևս հետևում է Կանոնագրքի 4.1 կետից:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանական գործունեությունն իրավապաշտպան գործունեության տեսակ է, որն իրականացնում է փաստաբանը և ուղղված է իրավաբանական օգնություն ստացող անձի իրավունքների, ազատությունների և շահերի իրականացմանն ու պաշտպանությանը՝ օրենքով չարգելված բոլոր միջոցներով և եղանակներով:*

Օրենքի 39-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի մեջբերված դրույթներով և Կանոնագրքի 4.1 կետով փաստաբանից պահանջվում է պահպանել քրեական դատավարության կարգը և ենթարկվել դատարանի օրինական կարգադրություններին՝ հարգալից վերաբերմունք դրսևորելով դատարանի նկատմամբ:

Հետևաբար Պալատի խորհուրդը գտնում է, որ դատարանի նկատմամբ հարգալից վերաբերմունք դրսևորելու պարտականությունը նախատեսված է Օրենքով և Կանոնագրքով, ուստի՝ չի կարող իրավաչափ համարվել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք ցուցաբերելը նույնիսկ վստահորդի շահերի պաշտպանության նպատակադրմամբ: Նմանապես, վստահորդին իրավաբանական օգնություն ցույց տալը չի կարող պատրվակ հանդիսանալ դատարանի հետ հարաբերություններում ոչ իրավաչափ և դատավարական իրավանորմերը խախտող վերաբերմունք ցույց տալու համար:

Տվյալ պարագայում Խորհուրդը հաստատված է համարում այն փաստը, որ թիվ ԵԷԴ/0039/01/17 քրեական գործով 19.07.2017 թվականի դատական նիստի ընթացքում պաշտպան Հարություն Բաղդասարյանն առանց նախագահողի թույլտվության, բարձր տոնայնությամբ կատարել է հայտարարություններ, բանավեճի մեջ մտել նախագահող դատավորի հետ, որի կապակցությամբ Դատարանի կողմից նախազգուշացվել է, սակայն անտեսելով Դատարանի օրինական պահանջը, պաշտպանը շարունակել է դրսևորել նույնանման վարքագիծ՝ շարունակելով խոչընդոտել դատական նիստի բնականոն ընթացքը՝ չենթարկվելով դատարանի օրինական կարգադրություններին, չպահպանելով դատական նիստում կարգուկանոն:

Մասնավորապես, նույն դատական նիստի ձայնագրությունից հետևում է, որ պաշտպանի կողմից ի պատասխան դատարանի՝ դատական նիստում կարգուկանոն ապահովելու կարգադրություններին հնչեցված արտահայտություններով՝ *«Եթե հիմա բոլոր փաստաբաններով կանգնենք, ի՞նչ եք անելու», «Դուք եք խախտում, հարգելի դատարան», «Վերջապես փորձեք հասկանալ՝ ի՞նչ ենք ուզում ասել», «Լավ, եկեք Դուք մեր բոլորի նկատմամբ կիրառում եք, խնդիրը չկա, սանկցիա կիրառեք, մենք սաղս ստեղից դուրս ենք գալիս, իմաստը ո՞րն ա: Ի՞նչ եք ուզում մեզնից»* արտահայտությունները կատարելով փաստաբան Հարություն Բաղդասարյանը հրաժարվել է ենթարկվել դատարանի օրինական կարգադրություններին, *պահպանել դատական նիստում կարգուկանոն*՝ խոչընդոտելովդատական նիստի բնականոն ընթացքը, դրանով իսկ՝ դատարանի նկատմամբ դրսևորելով անհարգալից վերաբերմունք:

Խորհուրդը գտնում է, որ նման վարքագիծը որևէ կերպ պայմանավորված չի եղել պաշտպանի՝ որպես դատավարության մասնակցի իրավունքներից և ուղղված չի եղել օրենքով չարգելված միջոցներով իր վստահորդի շահերի պաշտպանությանը:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի համաձայն՝ Պալատի խորհուրդը՝ լուծում է փաստաբանին պատասխանատվության ենթարկելու և կարգապահական տույժ նշանակելու հարցը:

Օրենքի 39.9-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

Պալատի խորհուրդը հաշվի առնելով Հարություն Բաղդասարյանի անձը, կարգապահական խախտման հետևանքները, մեղքի աստիճանը, տույժերի բացակայությունը, ինչպես նաև փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ, գտնում է, որ վերջինիս նկատմամբ պետք է կիրառել նկատողություն տույժի տեսակը:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 5–րդ մասի 14–րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7.- րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին, 39.9.-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ Փաստաբանների պալատի կանոնադրության 16.26-րդ կետի, Կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Հարություն Բաղդասարյանին, (արտոնագիր 707) ճանաչել մեղավոր Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 4.1 կետի խախտման համար:

2. Փաստաբան Հարություն Բաղդասարյանի (արտոնագիր 707) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝ **Սեդրակ Ասատրյան**

30 նոյեմբերի 2017թ.
թիվ ԿԳ/105-Ա
ք. Երևան